



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


2663

14189



1263

257



2663

575

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱԻՈՐՁԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԵՉԳԵՍԻՐԵՅ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

)(1870)(



68189
 Ազգային յառաջադիմութեան և նորա հոգւոյն
 բարոյապէս և նիւթապէս արծարծմանն արդեւք ե-
 ղած է արդի եկեղեցւոյս կերպատիտիտեալ դրութիւնը
 թէ իւր օտարամուտ քանի մը մոլար վարդապետու-
 թիւններով ու ծէսերով, և թէ իւր վարչական ըն-
 թացքով (մայր ակթոռոյն արդի դրութեանը Պօլսոյ
 և դաւառաց մէջ դանուող երբեմն իրաւասութեան
 պաշտպան կանգնող՝ թէ աշխարհականաց և թէ կրօ-
 նականաց ումանց նկատմամբ) : Նաեւ արդի դրու-
 թեամբ Հայաստանեայց եկեղեցին նախ՝ Ս. Թադէոսի
 և յետոյ, Ս. Լուրաւորչի դարերէն ՚ի վեր Առաքե-
 լոց և Մարգարէից, այսինքն հին և նոր կաակարանաց
 վերայ հիմնուած էր. և գրեթէ չորրորդ դարէն՝
 այսինքն Մեծն Տրդատոյ և ընդհանուր առմամբ Հա-
 յոց Ազգին Պաշտպան և բարերար Ռիոկղետիանոս
 Կայսեր յաջորդ՝ Մեծն Կոստանդիանոսի գրբիատոնէ-
 ութիւն ընդունած ատեն՝ Հայաստանի բարերարին
 առ ՚ի շնորհաւորութիւն այցելու եղան ըստ պահանջ-
 ման քաղաքականութեան (թէեւ ոմանք բոլորովին
 կը ստեն բայց գրեթէ այնպէս եղած ըլլայ) :

Հարազատ պատմութեանց նայելով այն ատեն հա-
 լատոյ առանց էական մասերուն դպչելով այն ամե-
 նապարզ եկեղեցին իբր թէ զարգարելով ինչպէս ը-
 սինք, գլխաւորապէս քաղաքականութեան յարաբե-

բուժեամբ առ հարկի մեկ քանի անակ ծէսեր մուտ
 դատած են . և հետզհետէ Հայոց անտերունջ ատեն-
 ները, ինչպէս Վարդանայ և եօթներորդ դարուն վեր-
 ջերը, այսինքն Սահակ կաթողիկոսէն ինչուան Բաղ-
 րատունեանց ծաղկիլը, նաև Ռուբինեանց ժամանակ,
 Բ. Աւետնէն մինչեւ Չ. Աւետնի մահուան միջոցները,
 և այլն . եթէ պատմութեանց բոլոր աղետալի անցքերը
 ուշի ուշով աչքէ անցնենք, պիտի տեսնենք թէ բացէ
 'ի բաց բոլորովին քաղաքականութեան նկատմամբ
 ղՀայաստան բարբարոսաց հարստահարութենէն իրը-
 կելու յուսով, Հայք մերթ Յունաց և մերթ Հռով-
 մայեցւոց դիմեցին նիւթապէս օգնութիւն դանելու
 համար . երբեմն ալ Յոյնք և Ատաինք իոխանակ օգ-
 նելու կուզէին իրենց եկեղեցւոյն ծէսերը ու արարո-
 ղութիւնները Հայոց մէջ ալ մտցնել երբեմն բռնի և
 երբեմն ճիզուիթական խորամանկութեամբ, որոց հա-
 մար շատ անգամ սարսափելի արիւնահեղութիւններ
 ալ պատահած է :

Աստի ո՞ր ողջամիտ և բանիմաց Հայ կուրանայ,
 և ո՞վ չգիտեր թէ աս միջոցներուն մաս մը թէ կրօ-
 նական և թէ աշխարհական, տգէտ, կոյր, կրօնա-
 մոլ, նախապաշարեալ, շահախնդիր, և իսառամօլ բը-
 նաւորութեամբ սպրդեցին, մտցուցին նախնեաց ող-
 ւոյն հակառակ՝ այն է նախկին Առաքելական պարզ
 և մաքուր դրութիւնը ազգավաճառ վատութեամբ
 անդաբեցին ու եղծեցին երբեմն Յունականութեան

ու երբեմն պատկանութեան կողմը բռնելով: Ա-
 հաւաստիկ արդի օտար դրութիւնն է թշուառութիւն
 Ազգին ու կղերին միանգամայն զորնոր ընկերու-
 թեանս բուն խնդիրն է. և որոց ապացոյց հողելոյս
 Ս. Պօղոս Պատրիարքի օրով վերջին օժման խնդիրը
 թէ՛ Ազգը եթէ Օսմանեան Մեծագոր տէրութեան
 հպատակ չըլլար շատոնց այն ալ կըլլած էինք (տես
 'ի հրաւեր սիրոյ տետրակը երես 18): Ուստի Հայ
 հասարակութեան ազատասէր և ողջամիտ մասին կող-
 մէն բազմաթիւ բողոքիչներ ունի թէ Պօլսոյ և թէ
 դաւառական համազգայնոց մէջ: Ամեն մէկ հարազատ
 և ողջամիտ Հայ քաջ համոզուած է Ազգային եկե-
 ղեցւոյ սա դրութիւնը վերջապէս թէ ուշ և թէ կա-
 նուխ մեր մահն է, եթէ չուզենք այսօրուրնէ ար-
 թըննալ 'ի վերակենդանութիւն: Անոր վերակենդա-
 նութեան, ինքնուրոյնութեան, նիւթապէս և բարոյա-
 պէս յառաջագիմական զարգացմանը մէկ հատիկ միջոց
 և նեցուկ, **ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆ**
 այսինքն մինչեւ որ եկեղեցւոյ բարեկարգութեան խըն-
 դիրը Ազգին հողւոյն մէջը չ'մտնէ և Ազգը առ խըն-
 դիրը չ'պարզէ և չ'իլուծէ՝ և մանաւանդ կղերին ա-
 տիճանն ու պարտաւորութիւնն անոր չի յանձնէ, չի
 պիտի կրնայ քայլ մ' անգամ յառաջ երթալ, ինչպէս
 մինչեւ այս օրս բազմաթիւ ընկերութիւններ ու փոր-
 ձեր սա հակաա դրութեան դաշնուելով փոշւոյ պէս
 անհետ եղած են:

Ընկերութիւնս 'ի սէր Ազգին յանձն առած պարտականութիւնն սա ամենակարեւոր և Ազգ օգուտ պաշտօնը իր նպատակին հասցնելու համար ներկայ տարւոյս Ապրիլին հիմնադրական կանոնադրութիւնս 'ի լոյս կ'ընծայէ, և որոշած է իւր սրբազան ուխտին և փափաքանայր համեմատ յառաջ տանիլ ազգասիրաբար այս ծանր և փափուկ պաշտօնը և վաստակել ճշգրտմբ, Տէրամբ և զօրութեամբ նորին՝ Ազգային Նկեղեցւոյն վերանորոգութեան շինութեան կամ որ նոյն է բարեկարգութիւնը՝ որուն մէջ կը բովանդակուի Ազգին ամբողջութիւնը, ժամանակաւոր և յաւիտենական վերկութիւնը, խաղաղութիւնը ու երջանկութիւնը, և զանի արդիւնաւոր եղանակաւ դ ործադրել ապրու համար կը փութայ նախապէս բարեկարգութեան դաղափարը Ազգին մէջ համարձակ տարածել եւ նորա դործադրութեանը անվեհեր հսկել, վասն զի Ընկերութեանս առաջարկածը ո՛չ զատ եկեղեցի, կամ բաժանում մը կազմել է, եւ ո՛չ կրօնափոխութիւն է, եւ ո՛չ քաղաքական ապստամբութիւն է, այլ մի միայն հին եւ նոր Ատակարանը ի ձեռին առաջնորդ ունենալով՝ համայն եկեղեցական եւ աշխարհական ողջամիտ մասամբ իր մէջը փնտռէ ու գտնէ բարեկարգութիւնը, գարձեալ ընկած տեղէն վերականգնի:

ԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ Ա. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1870 Ապրիլ 27


ԳՈՐԾԱԳԻՐ ԺՈՂՈՎ

Վաստակ նուպօլիս

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱԻՈՐՉԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՉԳՆԱՍԻՄՆ



Ա .

ՆՊԱՏԱԿ

Հայաստանեայց Եկեղեցին՝ Ստուգածաշունչ Ս . դրոց առաջնորդութեամբ վերածել իւր Լուսաւորչաւանդ Ս. աքելական դրութեանը հետեւեալ կերպով՝

Ա . — Յարդել և պաշտպանել բուն իսկ Ս . Լուսաւորիչ հօր և նախնեաց աւանդած Ս . դրոց համաձայն ուղղափառ վարդապետութիւնները :

Բ . — Ի բաց թողուլ օտար միջամտութեամբ կամ ազդեցութեամբ մտած ծիսական ձեւերը , մասաւոր սովորութիւնները ու մոլոր վարդապետութիւններն :

Գ . — Թողուլ կղերին միմիայն Եկեղեցական պաշտամանց և հովուական սրբադան պաշտօնէից դործադրութիւնը :

Դ . — Սեպհականել Ս. դր այլին Վարչութիւնը և եկեղեցականները ընտրելու իրաւունքը Հայաստանեայց Եկեղեցին կազմող մարմնոյն :

Բ .

ԿՄԶՄՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎՍՐԶՈՒԹԵԱՆ

1. — Ընկերութեանս կեդրոնական վարչութիւնը կը բաղկանայ երկու ժողովներէ որք են , Գործադր. և Ընդհանուր ժողով , իսկ կեդրոնատեղին է Կ . Պօլիս :

Գ .

Ա . ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ .

2. — Գործադիր ժողովը կը բաղկանայ եօթն անձի ըէ որոց պաշտօնն է , Ստենապետութիւն՝ և Փոխատենապետութիւն , Ստենադպրութիւն՝ և Փոխատենադպրութիւն , Տօմարակալութիւն , Գանձապետութիւն , և Տեսչութիւն :

3. — Ստենապետին պաշտօնն է ճիշտ ժամանակին ներկայ գտնուիլ և ժողովքը բանալ , Ա . արձանագրութիւնը կարդացնել և վաւերացնել , Բ . առաջարկուած ընկերները ըստ կանոնի ընդունիլ , Գ . առաջին նիստէն չիլուծուած խնդիր մը առարկել և կամ նշանակել տալ յաջորդ նիստին թողլով , Դ . կարելի եղածին չափ վէճերը մեղմացնել , Ե . եթէ ատենապետը բանաւոր պատճառաւ մը չիկարենայ ներկայ գտնուիլ պարտի իւր փոխանորդին նամակաւ մը իմաց տալ :

4. — Ատենադպրին պաշտօնն է օրուան նիստին որոշուած խնդիրները արձանագրել ճիշտ թուովն, ներկայ անդամոց անուններն արձանագրել, օրինաւոր առաջարկութիւնները նշանակել, ընկերութեանս վերաբերեալ նամակները անմիաստ պահել, և եթէ ինքը բանաւոր պատճառաւ մը չիկարենայ ներկայ դռնուիլ պարտի ընկերութեանս արձանագրութեան տետրակը իւր փոխանորդին յաճնել :

5. — Տօմարակալին պաշտօնն է, Ա. Տօմարի մը մէջ արձանագրել բոլոր ընկերաց անունը, մականունը, տարիքը, արհեստը, և բնակութիւնը, Բ. ելեւմտից տումար մ'ալ պէտք է ունենայ դանձապետին տումարին համաձայն :

6. — Տեսչին պաշտօնն է ընկերութեանս կնիքը անմիաստ պահել և առանց ատենապետի և ատենադպրի ստորագրութեան չիկրնար որ եւիցէ դրութիւն մը կնքել, և եթէ ատենապետը և ատենադպիրը պատահմամբ բացակայ դռնուին կրնայ ատենապետի պաշտօն վարել :

7. — Պանձապետին պաշտօնն է ընկերութեանս դրամները հաւաքել ժամանակին և նոյն դրամները անմիաստ պահել և առանց գործադիր ժողովոյ վաւերագիր հաճութիւնը ստանալու չիկրնար ընկերութեանը սնտուկէն ստակ մը դուրս հանել :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

1. ԿԵԴԻՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բ. ԳՈՐԾՍԴԻՐ ԺՈՂՈՎ

8 . — Գործադիր ժողովը բաց 'ի արտաքոյ կարգի նիստերէ ամեն երէք շաբաթը անդամ մը կը դաժարուի ընկերութեանս գործոյ կարգադրութեանը համար :

9 . — Գործադիր ժողովը պատասխանատու չէ Ընդհանուր ժողովոյ ընտրած Փանձապետին համար այլ հսկող և պատասխանատու է անկէ Ընկերութեանս կողմէն . իսկ Փանձապետը անձամբ պատասխանատու կ'մնայ միշտ թէ Ընդհանուր և թէ Գործադիր ժողովոյ առջև :

10 . — Գործադիր ժողովոյ անդամներէն մեկը եթէ շարունակ երեք նիստերու ներկայ չիդ տնուի ընկերները կ'պարտաւորին անմիջապէս ազդարարութիւն ընել Ընդհանուրին որ անոր տեղը ուրիշ մ' ընտրեն :

11 . — Մէկ տարին անդամ մը Գործադիր ժողովոյ անդամները կը լուծուին ապրիլ մէկին որ է ընկերութեանս հիմնադրութեան օրը և նորէն կընտրուի :

Ա . ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ .

12 . — Ընդհանուր և Քործադիր Ժողովները ճիշտ իրենց ժաման կը հասնի սակայն Ընդհանուր Ժողովը առանց դործադիր Ժողովոյն ատեան չիկրնար բանալ եթէ դործադիր Ժողովը անբաստանեալ չէ :

13 . — Քործադիր Ժողովոյ անդամներէն եթէ չորսը ներկայ է կրնան իրենց ատեանը բանալ և Քործադիր Ժողովը պարտ է վեց ամիսը անդամ Ընդհանուր Ժողով կանչէ անդամներէն տասներկուքը եթէ ներկայ դանուի կրնայ ընդհանուր Ժողով բացուիլ :


14 . — Ընկերութեանս անդամներէն հինգ անցինք եթէ դործադիր Ժողովոյ ընթացքին հաւնին իրենց բողոքադիրը կը ներկայացնեն Տեսչին որնոր ընդհանուր Ժողով հրաւիրելով բողոքադիրը կը ներկայացնէ ընդհանուր Ժողովոյն և եթէ հարկ տեսնուի դործադիր Ժողովը լուծուելով տեղը նոր մը կընտրուի :

15 . — Ընդհանուր Ժողովը պարտի վեց ամիսը անդամ մը Քործադիր Ժողովոյ արձանագրութիւնը աչքէ անձնել , Տօմարակային տետրակը քննել , և Քանձապետին հաշիւները դիտել , դաւառաց առաջարկութիւնները որոշել :

2. ԳԱԼԱՌԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

16. — Գալառական ընդհանուր ժողովները ամեն ամիսը անդամ մը կը դուժարուին իրենց խնդիրները որոշելու համար :



Գ. ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ,

17. Գալառային դործադիր ժողովները կը բաղկանան իրենց ընդհանուրէն ասոնց դործադիր ժողովները, և Պօլսոյ կեդրոնատեղիին համեմատ պէտք է ընտրուին :

18. — Գալառի մը մէջ կրօնական բարեկարգութիւնը զգացող ամենէն քիչ մինչեւ երեք անձինք մեկտեղ դալով նախ պէտք է ծանուցանեն Պօլսոյ կեդրոնատեղիին և տեղեկացնեն իրենց անունը, մականունը, եւ արհեստը, որմէ կանոնադիր մը պահանջելով պէտք եղած հրահանգութիւնը ստանան :

19. — Վերի կանոնին մէջ յիշուած անձանց թիւը եթէ ութի հասնի կրնան Պօլսոյ կեդրոնատեղիին համեմատ իրենց Տնօրէն ժողովները կազմել :

20. — Գալառային ժողովները ամեն վեց ամիսը անդամ մը իրենց ընդհանուրով վաւերացած արձանագրութիւնները և ընկերաց ցանկը պարտին Պօլսոյ

կեդրոնատեղին խրկել , նաեւ իրենց նամակները և ուրիշ գրութիւնները ընկերութեանս կնիքով պէտք է կնքուած ըլլայ :

21 . — Ամեն դաւառաց ժողովները պէտք է իրենց կնիքը Պօլսոյ կեդրոնատեղիէն ընդունին իրենց ծախքովը :

22 . — Թէ Պօլսոյ և թէ դաւառաց մէջ գտնուող ընկերութեանս անդամակցող բոլոր ազգայինք պէտք է ամսական տուրք մը վճարեն իրենց կեդրոնատեղիին ծախուց համար այս ամսական տուրքէն 'ի զատ պէտք է տարեկան տուրք մ'ալ վճարեն ընկերութեանս ծախուց համար , վեց , տասներկու , քսանեւչորս , առաջարկեալ բաժիններէն ամեն անհատ ըստ կարեաց պէտք է վճարէ :

23 . — Այս տարեկան տուրքը ուղղակի Պօլսոյ կեդրոնատեղին խրկուելով զատ անտուկէ մը մէջ պիտի ամփոփուի և ինչ որ ընկերութեանս ընդհանրութեանը կը վերաբերի անոր համար պիտի ծախք ըլլայ :

24 . — Թաղի մը մէջ հինգէն մինչեւ ութ անձինք կրնան ճիւղ մը կազմել ասոնք պէտք է ներկայանան իրենց թաղական կեդրոնատեղիին և ընկերութեանս նպատակաւ ինչ սկզբունք ունենալնին պէտք է յայտնեն և եթէ կեդրոնական ժողովը յարմար դատէ արտօրնութիւն կառնուն ճիւղ մը բանալու :

25 . — Թաղական ճիւղերը իրենց մէջ չիլուծուած խնդիրները պէտք է իրենց կեդրոնատեղիին խնայ

տան նաեւ իրենց վաւերացեալ արձանագրութիւնս-
ները վեց ամիսը անդամ մը իրենց կեդրոնատիղին
ներկայացնեն որպէսզի կեդրոնական ժողովքը իւր
արձանագրութեան տեւորին մէջ ամփոփելով վեց ամի-
սը անդամ մը Քոչսոյ կեդրոնատեղին խրկեն :

Ե .

Ս.ՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

26 . — Ընկերութեանս անդամակցութեան փա-
փաքող որեւիցէ ազգային մը առանց խտրութեան
կնդունուի երբ ընկերի մը միջոցաւ Գործադիր ժողո-
վոյն կամ իւր բնակած թաղին Յանձնաժողովոյն յայտ-
նէ իւր փափաքը , Գործադիր ժողովը կամ Յանձնա-
ժողովը ընդունելութեան հաճութիւն տալէն զինի
առաջարկողը Գործադիր ժողովոյ կողմէն Ընկերու-
թեանս նպատակը կրող տպեալ ցուցակ մը կը ներկա-
յացնէ առաջարկեալին և եթէ ընդունի իւր հաճու-
թեանս ստորագրութիւնը կը յանձնէ :

27 . — Եկեղեցական դասէն ալ կ'ընայ ընկերու-
թեանս անդամ ընդունուիլ ըստ կանոնի հաւատարու-
թեան սկսբանց և ողոյն համաձայն ձայն ու քուէ ու-
նենալ և իբրեւ ազգային անհատ սուրբ վճարել :

2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՒՅ

28 . — Լուծեալ ժողովոյ անդամները կ'ընան վերը
ընտրելի ըլլալ նորակազմ ժողովներու մէջ :

29 . — Ժողովական մը կ'ընայ պաշտօն ընդունիլ
զանազան ժողովներու մէջ :

30 . — Ընկերութեանս անդամակցող բոլոր ազ-
գայինք պէտք է Ընկերութեանս կողմէն կնքեալ Ակա-
յարան մը ունենան ուրիշ թաղի ժողովներու մէջ գրա-
նուելու համար ատենք միմիայն ձայն ունին և ոչ քուէ :

31 . — Քուէները միշտ քաղանի կը տրուի ձեռ-
նացի նշան կամ յայտնի քուէ այն ատեն կը տրուի երբ
ժողովոյն մեծագոյն մասը հանութիւն կուտայ :

32 . — Ընկերութեանս թէ դրամական և թէ ըն-
չից վերաբերեալ ընդունած նուէրները արձանագրու-
թեան տեսրին մէջ պիտի արձանագրուի և մէկ տար-
ւան համարատուութեան ատեն մասնաւորապէս պի-
տի յիշուին նուիրատուաց անուններովը :

33 . — Ընկերութիւնս իւր հաւաքուծ դրամները
միմիայն իւր նպատկին հասնելու միջոցներուն պիտի
ծառայեցնէ ուստի չուղէր բնաւին առեւտրական գոր-
ծերու մէջ մտնել :

34 . — Ընկերութիւնս Ազգային Սահմանադրու-
թեան օրը հանդէս մը պիտի կատարէ 'ի յիշատակ

Իւր հիմնադրութեան սոյն հանդէսը բոլոր գաւառա-
կան կեդրոններն ալ պարտաւոր են կատարելու :

35 . — Ամենադրութեանս բոլոր տրամադրու-
թիւնները անփոփոխ կը մնան մինչեւ երկու տարի
իսկ այնուհետեւ եթէ ընկերութիւնս պատշաճ գա-
տէ կրնայ վերաքննութեամբ փոփոխութիւններ ընել
առանց անոր ոգոյն և նպատակին դպչելու :

